ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2017 թ.

№ 14 (1014)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երկօրյա աշխատանքային այցով Մանկավարժական համալսարանում էին Հայաստանում Կոնֆուցիուսի ինստիտուտի չինական կողմի տնօրեն Յան Մեյխուան, Պեկինի մանկավարժական համալսարանի չինարեն լեզվի և մշակույթի ինստիտուտի տնօրեն Չժու Ժույպին և աշխատակից Չժան Սյուեցին:

Պատվիրակությանն ընդունեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Ռեկտորը ողջունեց հյուրերին՝ ասելով, որ մեր համալսարանը մեր երկրի հնագույն համալսարաններից է և այս տարի նշում է հիմնադրման 95-ամյակը: «Մեր երկիրը փոքր է, ազգաբնակչությունը՝ փոքրաթիվ, սակայն այդ իրողության մեջ մեր համալսարանը բուհերի մեջ երկրորդն է իր ուսանողների, դասախոսների և աշխատակիցների թվով»,- ասաց Ռուբեն Միրզախանյանը:

Նա անդրադարձավ բուհի տարատեսակ մասնագիտություններին և ընդգծեց, որ մի քանիսի ուղղությամբ բուհը մենաշնորհ ունի:

➤2

ՀՊՄՀ ուսանողը պարգևատրվեց

Հանրապետության Նախագահի նստավայրում տեղի է ունեցել տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում ՀՀ Նախագահի 2017 թ. կրթական պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունը, որի ժամանակ Նախագահը մրցանակակիրներին հանձնել է տարբեր անվանակարգերում նրանց շնորհված պարգևները: Յուրաքանչյուր անվանակարգի համար վկայագրի հետ միասին երիտասարդները ստացել են նաև հուշախորհրդանիշներ և դրամական պարգևներ:

Սերժ Սարգսյանը շնորհավորել է բարձր առաջադիմություն ցուցաբերած և այս տարվա կրթական պարգևներին արժանացած ուսանողներին և աշակերտներին՝ մաղթելով, որ այդ մրցանակները լինեն նրանց առաջին քայլը մեծ հաջողությունների ճանապարհին:

Այս տարի ՀՀ Նախագահի ամենամյա կրթական պարգևին արժանացել են 26 ուսանող և 17 աշակերտ 6 բուհից և 8 ավագ դպրոցից: Մինչ այսօր ՏՏ ոլորտում տարբեր անվանակարգերում ՀՀ Նախագահի կրթական պարգևին արժանացել են 452 ուսանող և աշակերտ:

Միջոցառման շրջանակներում Նախագահի նստավայրում հյուրընկալվել և խրախուսվել է նաև 10-18 տարեկան աղջիկների համար աշխարհի խոշորագույն տեխնոլոգիական մրցույթում՝ «Թեքնովեյշն»-ում հաղթած Արագածոտնի մարզի Կարբի գյուղի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցի աղջիկների թիմը, որը «Կրթություն» անվանակարգում ստեղծել է «Հայերեն ժեստերի լեզու» բջջային հավելվածը:

«Թող այս մրցանակները լինեն ձեր առաջին քայլը մեծ հաջողությունների ճանապարհին: Շնորհավորում եմ ձեզ և մաղթում լավ, պայծառ ապագա», -ասել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Պարգևատրվողների մեջ էր նաև մեր համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանողուհի Արմինե Ալեքսանյանը:

Մանկավարժական համալսարանի ռադիոն՝ Ֆաման, արդեն 4 տարեկան է:

Առաջին համալսարանական ռադիոն կոչվեց Ֆամա՝ ի պատիվ հունա-հռոմեական դիցարանի աստվածուհու, ով «ամեն ինչ լսում և ամեն ինչ տեսնում է»: Այսօր արդեն ռադիո Ֆաման՝ 24 ժամ եթերում նույն գործառույթն է իրականացնում:

Ռադիո Ֆաման առաջին անգամ եթեր է հեռարձակվել 2013 թվականի նոյեմբերի 1-ին:

Միեր Մարգարյանը ռադիո Ֆամայի ղեկավարն է, նա համակարգում է ռադիո Ֆամայի աշխատանքները:

ՌԱԴԻՈ ՖԱՄԱՆ 4 ՏԱՐԵԿԱՆ Է

- Շուրջ 14 տարի դուք ուղղակիորեն կապ ունեք ռադիոյի հետ. ի՞նչ է ձեզ համար ռադիոն:

- Այո՛, ճիշտ եք, իմ կյանքը 14 տարի առաջ կապեցի ռադիոյի հետ և մինչ օրս շարունակում եմ ապրել այդ աշխարհում: Ռադիոն ինձ համար գաղտնի, հետաքրքիր ու նաև դեռևս լիովին չբացահայտված աշխարհ է, որտեղ ամեն օրը նոր ու գունեղ է:

- Ռադիո Ֆաման արդեն 4 տարեկան է, որքանո՞վ է կայացել Ֆաման:

- Ֆաման իր բնույթով ունիկալ է, քանզի այն միակ համալսարանական ռադիոկայանն է, նախ և առաջ հենց դրանով էլ ա-

➤6

ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ավանդիատ կրթության անհրաժեշտությունն ու խնդիրները

«Մեծահասակների ավանդիատ կրթությունը՝ որպես ժամանակակից հասարակության բնորոշ գիծ» խորագրով 2-րդ միջազգային համաժողովի աշխատանքները շարունակվեցին Մանկավարժական համալսարանում: Հոկտեմբերի 24-25-ը Սանկտ Պետերբուրգում մեկնարկած և Հայաստանում շարունակվող համաժողովին ԱՊՀ երկների ներկայացուցիչներից բացի մասնակցում էին պատվիրակներ նաև արևմտյան և եվրոպական երկրներից:

«Գլոբալիզացիայի ժամանակաշրջանը ոչ միայն նոր հնարավորությունների, այլև մարտահրավերների շրջան է. դրանցից մեկն էլ մեծահասակների կրթությունն է: Ժամանակակից աշխարհը համաշխարհային կրթական համակարգի և ազգային ծրագրերի հենքի վրա օպտիմալացման լուծման համար առաջարկում է իր մեթոդներն ու ուղիները»,- ասաց պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ միջազգային համաժողովի կլոր սեղան քննարկման ժամանակ: Վերջինը նկատեց, որ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի կազմակերպած համաժողովում ներկայացված թեմաներն ընդգրկում են մեծահասակների ավանդիատ կրթության վերաբերյալ մոտեցումների ողջ ասպեկտը, որոնք կներկայացվեն ինչպես հայ, այնպես էլ ռուսական կրթական համակարգի առաջատար մասնագետների կողմից: Պրոռեկտորը ընդգծեց նաև, որ մեծահասակների կրթությունն այն համատեքստում, որն առաջադրված է պրակտիկայում, հիմնականում իր երեք՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևերով, միանշանակ հաշվի չի առնում ներուժի արդիականացման հնարավորությունների կողմը, որ յուրաքանչյուր տարածաշրջան առաջադրում է այդ խնդիրների լուծման համար: ԱՊՀ երկրների փորձն այդտեղ ևս միանշանակ չէ, և ազգային ծրագրերը, որոնք ներկա-

➤3

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

➤1 Ռեկտորը մատնանշեց անցած տարեվերջին աշխատանքային պատվիրակության կազմում իր այցը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն և հավաստիացրեց՝ վճռական տրամադրությամբ պատրաստ է համագործակցել կնքված համաձայնագրով սահմանված ուղղություններով, որովհետև բարձր է գնահատում չին ժողովրդի պատմությունն ու մշակույթը:

Ռուբեն Միրզախանյանը հավելեց նաև, որ առաջիկայում կկազմակերպվեն փոխայցեր, որոնք հնարավորություն կընձեռեն մանրամասն ծանոթանալ բուհերում առկա այն ուղղություններին, որոնցով հնարավոր է համագործակցել:

«Բուհը բացառիկ հաջողություններ ունի սպորտային, մշակութային, շախմատի և այլ բնագավառներում: Միջազգային կրթական ասպարեզում շախմատը մեր բրենդն է»,- ասաց Ռուբեն Միրզախանյանը և հույս հայտնեց, որ այս այցելությունները կլինեն արդյունավետ և օգտակար: ՀՊՄՀ ռեկտորը Չժու Ժույպինին հանձնեց Պեկինի մանկավարժական համալսարանի ռեկտորին Մանկավարժական համալսարան այցելելու հրավեր:

Չժու Ժույպինը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և վստահեցրեց, որ գործընկերների հետ ունեցած քննարկումները արդյունավետ էին և հետաքրքիր:

«Եթե Մանկավարժական համալսարանում ներդրվի չինարենը, որպես մասնագիտություն, ապա այն երկու երկրների բուհերի համար մեծ ներդրում կլինի, քանզի երկու բուհերի առաքելությունն էլ մանկավարժներ պատրաստելն է, որոնք պետք է կրթեն ապագա սերունդներին»,- ասաց Չժու Ժույպինը՝ հավելելով՝ թանգարանում շրջելով արդեն համոզվել են՝ Մանկավարժական համալսարանն իր ժամանակի մեջ մեծ ազդեցություն է ունեցել և այժմ էլ ունի, իսկ բուհի հետ համագործակցությունը մեծ պատիվ համարեց:

***

Մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 30-ին տեղի ունեցավ հանդիպում Չինաստանից ժամանած պատվիրակության հետ:

Միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արա Երեմյանն ընդգծեց, որ հանդիպումն սպասված էր, որովհետև բուհը մեծ նշանակություն է տալիս չինարեն լեզվին ու մշակույթին և պատրաստ է համագործակցել չինական կողմի հետ կրթական տարբեր ծրագրեր իրականացնելու նկատառումով: Պրոռեկտորը հավաստիացրեց, որ կապահովվի իրականացվող կրթական ծրագրերի որակն ու զարգացման ընթացքը:

Չժու Ժույպինն ասաց, որ իրենց համար պատիվ է Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ համագործակցելը: Նա հակիրճ ներկայացրեց Պեկինի մանկավարժական համալսարանը և իր ղեկավարած ֆակուլտետը՝ ընգծելով, որ մեր և իրենց առաքելությունը ուսուցիչ պատրաստելն է:

Պեկինի մանկավարժական համալսարանը Չինաստանի լավագույն բարձրագույն կրթական հաստատություններից է, որը հիմնադրվել է 1902 թվականին, մեր համալսարանի հիմնադրումից դեռևս 20 տարի առաջ:

Մանկավարժական համալսարանում ուսուցանվող օտար լեզուների մասնագիտությունները ներկայացրեց Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը: Նա նշեց, որ ֆակուլտետում ուսուցանվում են հիմնականում եվրոպական երկրների օտար լեզուներ, սակայն համալսարանում չինարեն լեզվի ներմուծումը ուսանողների առաջ կբացի նաև չինական հետաքրքիր ու յուրօրինակ մշակույթի դռները:

«Չինարեն լեզուն դժվար է սովորել՝ տառերից մինչև փիլիսոփայություն, սակայն մենք պատրաստ ենք ապահովել ակադեմիական այն մթնոլորտը, որում ուսանողները կկարողանան ուսումնասիրել չինարեն լեզուն և մասնավորապես մշակույթը»,-ասաց Տ. Միքայելյանը: Դեկանն անդրադարձավ նաև այդ լեզվի ուսուցման մեթոդաբանությանը, որն իր հատուկ կարգավիճակով կառանձնանա մյուս լեզուների մեթոդաբանությունից:

Մկրտիչ Ավագյանը հյուրերին ներկայացրեց, որ համալսարանն ունի 45 բակալավրական և 54 մագիստրոսական մասնագիտություններ, և որ մանկավարժական մասնագիտությունների տիրույթում հատուկ տեղ ունեն օտար լեզուները, որոնք հանդես են գալիս թե՛ որպես առաջին, թե՛ որպես երկրորդ օտար լեզու:

«Այս պահին նպատակահարմար է և առավել դյուրին չինարենը որպես երկրորդ օտար լեզու ներմուծելը, բայց մեր վերջնական նպատակը չինարենը որպես առաջին օտար լեզու ներմուծելն է»,-ասաց Մ. Ավագյանը՝ առաջարկելով երկուստեք աշխատանքային հեռահար խմբեր ստեղծել՝առաջարկվող մոտեցումներին տիպային տարբերակի տեսք տալու համար: Վերջնական տարբերակի ընդունման վերաբերյալ չինական կողմի համաձայնության դեպքում որոշակի քայլեր կարվեն, այն է՝ եկող ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկում չինարեն լեզվի և մշակույթի մասնագիտությամբ ընդունելություն հայտարարելով: Չինարեն լեզվի ու մշակույթի կրթական ծրագրով ուսուցումը ՀՊՄՀ-ում կիրականացնեն չինացի մասնագետները:

Չժու Ժույպինը վերջում անդրադարձավ տարբեր երկրներում չինարենի ուսուցման իրենց երկրի փորձին՝ մասնավորեցնելով, որ ելնելով աշխարհաքաղաքական իրավիճակներից, շատ երկրներ ցանկանում են չինարեն լեզուն ու մշակույթը մտցնել հանրակրթական դպրոցներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Աշխատանքային հանդիպումից առաջ չինական պատվիրակությունը ծանոթացավ համալսարանի թանգարանին:

***

Չինացի գործընկերները եղան նաև բուհի Գեղարվեստական կրթության և Կուլտուրայի ֆակուլտետներում:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետում նրանք ծանոթացան մասնագիտություններին, դասավանդվող առարկաներին, պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպումից հետո ծանոթացան նկարչության, քանդակագործության, արվեստի պատմության, դիզայնի դասերին, նաև հայ մասնագետների դասավանդման մեթոդներին:

Այնուհետև Կուլտուրայի ֆակուլտետում պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի ուղեկցությամբ ներկա գտնվեցին ապագա պարուսույցների փորձին, էկրաններով դիտեցին բուհի ուսանողների մասնակցությամբ չինական ազգային պարի բեմադրություն:

Պեկինից ժամանած հյուրերին երաժշտական կատարումներով անակնկալ մատուցեց ֆակուլտետի փողային նվագախումբը, ապա օտարերկրյա հյուրերի համար ապագա ռեժիսորները բեմադրություն ներկայացրին:

Այցն ավարտվեց Արմեն Հովհաննիսյանի անվան ուսումնական ստուդիա այցելությամբ, որտեղ հյուրերը ծանոթացան ապագա հեռուստալրագրողների պրակտիկ գործունեությանը:

Անընդհատ կրթության անհրաժեշտությունն ու խնդիրները

➤1 յացվում են կրթական տարբեր հարթակներում այդ խնդրի լուծման համար, առաջադրում են նոր պահանջներ, որոնցում կարևոր է տնտեսական իրողությունները հաշվի առնելը:

Համաժողովի կազմկոմիտեի ղեկավար, մանկավարժական գիտությունների դոկտոր Մարինա Յակուշկինան իր ելույթում ևս անդրադարձավ թեմայի կարևորությանը՝ նկատելով, որ մեծահասակների անընդհատ կրթությունը շատ դեպքերում թույլ է տալիս լուծել քաղաքական, տնտեսական և մշակութային խնդիրներ: «Թեմայի վերաբերյալ քննարկումները նոր չեն, ու խնդիրների մասին առաջին անգամ չէ, որ

բարձրաձայնում ենք: Սա ավանդական համաժողով է, որի ընթացքում հասկացել ենք՝ միայն մանկավարժը չէ, որ հանդիսանում է այդ մեծ՝ համաշխարհային կրթական տարածքի մասնիկը, այլև այն բոլոր մեծահասակները, որոնք կան այդ ասպարեզում»,- ասաց Մ. Յակուշկինան:

Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լաուրա Ասատրյանն անդրադարձավ այն խնդրին, որ այս դարաշրջանում զարգացումն ընթանում է շատ արագ և ժամանակին համընթաց լինելու համար առաջանում է մեծահասակների հետբուհական, շարունակական կրթության, ինչպես նաև վերաորակավորման ու վերամասնագիտացման անհրաժեշտություն:

«Ներկայացվող թեմաներն այսօր ցավոտ խնդիր են՝ հաշվի առնելով օպտիմալացումը, դպրոցների վերամիավորումը, որի արդյունքում էլ առաջ է գալիս մասնագիտությունների ինտեգրացիա, հետևաբար վերաորակավորումը դառնում է անհրաժեշտություն: Միջազգային ֆորումը կազմակերպվել էր փոխօգնության, փորձի փոխանակման, համագործակցության նպատակով, ինչպես նաև՝ քննարկվելու արտադպրոցական հաստատությունների զարգացման հարցը: Մինչև ԽՍՀՄ փլուզումն այդ երկրներում արտադպրոցական լայն ցանց է եղել, իսկ այսօր դրանք դադարել են գործել, հատկապես ՀՀ-ում»,- ասաց Լ. Ասատրյանը:

Բանախոսն անդրադարձավ նաև ՀՀ-ում կիրառվող մեծահասակների կրթության տեխնոլոգիաներին՝ նկատելով, որ այսօր էլ կան կրթության իրականացման արդյունավետ մեթոդներ, որն էլ կնպաստի դառնալ շուկայի պահանջներին համապատասխան:

Հանդիպման ավարտին մասնակիցներին տրվեցին պատվոգրեր, հյուրերը եղան նաև բուհի թանգարանում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ. «ՍՅՈՒՆԻՔԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՋԱԽ»



Սյունյաց աշխարհը հայտնի է եղել իբրև միջնադարյան Հայաստանի կրթամշակութային խոշոր կենտրոն: Մատենագիտական աղբյուրները վկայում են, որ հայոց դպրության ամենահին օջախները հաստատված են եղել Սյունիքում:

5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը Վաղինակ ու Վասակ Սյունի իշխանների աջակցությամբ Սյունիքի Գողթն գավառում բացում է դպրոցներ: Հետագայում 5-8-րդ դարերում, կրթամշակութային գործը Սյունիքում նշանավորվել է մի շարք գործիչների՝ եպիսկոպոս Անանիա Թարգմանչի, քերթողներ Պետրոս Սյունեցու, Մաթուսաղա Մովսեսի և ուրիշների գործունեությամբ, որոնք առաջնորդել են Սյունյաց վարդապետարանի կրթական գործը: 9-րդ դարից Սյունիքն ապրել է կրթամշակութային վերելք. հիմնադրվել է Տաթևի համալսարանը, որը համարվում էր «Աղբյուր իմաստից՝ ի վարդապետարանն Սյունյաց»: Այն հետագայում դարձել է համահայկական կրթամշակութային կենտրոն: Հռչակավոր է եղել նաև Գլաձորի համալսարանը, որն անվանել են «Երկրորդ Աթենք»:

Միջնադարյան Հայաստանի համալսարանները հսկայական դեր են կատարել գիտության և մշակույթի պատմության մեջ՝ պատրաստելով գիտության և արվեստի տարբեր բնագավառների մասնագետներ, որոնք ոչ միայն ստեղծեցին հայ մշակույթի կոթողներ, այլև կարևոր նպաստ բերեցին համաշխարհային քաղաքակրթությանը: Դարեր շարունակ Սյունյաց աշխարհի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների, մշակութային, կրթական գործիչների հոգածության շնորհիվ Սյունիքում նույնիսկ ամենածանր պայմաններում պահպանվել է ազգային կրթօջախների կենսահաստատությունը:

Գորիսի պետական համալսարանը հնավանդ Սյունյաց աշխարհում Տաթևի վարդապետարանից հետո երկրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունն է և անցել է փառավոր ուղի:

ԽԱՉԱՏՈՒՐ Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ստեղծումը պատմական կարևորագույն իրադարձություն էր: Մասնաճյուղի ստեղծմամբ Սյունիքի մտավորականները լայն հնարավորություն էին ստանում աշխատելու մարզում և ծառայելու հայրենակիցների գիտական ու մշակութային պահանջներին:

Հոկտեմբերի 19-20-ին Գորիսում տեղի ունեցավ «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ» գիտաժողովը նվիրված Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին:

Գիտաժողովին մասնացում էին և գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՊՄՀ-ի հայ հին և միջնադարյան գրականության դասավանդման ամբիոնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը, ՀՊՄՀ-ի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Ասատրյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շողիկ Ոսկանյանը, դոցենտներ Մարգարիտա Ասատրյանը, Լյովա Հարությունյանը, Զաբելլա Զոհրաբյանը:

Առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանի «Սյունյաց Մեծ անապատը և հայ հոգևոր կյանքի վերածնունդը», պրոֆեսոր Լաուրա Ասատրյանի «Առաքել Սյունեցու մանկավարժական հայացքները» գիտական զեկուցումները, որոնք նոր խոսք էին մանկավարժական մտքի պատմության մեջ:

Հետաքրքրությամբ լսվեցին նաև պրոֆեսոր Շ. Ոսկանյանի, Վ. Կարապետյանի, Զ. Զոհրաբյանի «Տաթևի դպրոցը և նրա անխոնջ մշակը», Մ. Ասատրյանի և Լ. Հարությունյանի «Գլաձորի համալսարանի ուսումնականները և նրանց ազդեցությունը Սյունիքի գիտակրթական մտքի զարգացման վրա» զեկուցումները:

Բացման խոսքում Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանը շնորհակալական խոսք հղեց Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ին, որի մասնաճյուղն է 1967 թվականից մինչև 1984 թվականը:

Երկօրյա գիտաժողովի մասնակիցները եղան նաև Սյունիքի պատմամշակութային վայրերում, ըմբոշխնեցին բակունցյան չքնաղ աշխարհի աշնանային հրաշագեղ գույները:

Դասախոսություններ Հունգարիայում

Հոկտեմբերի 18-22-ը Մանկավարժական համալսարանի ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Անդրանիկ Ստեփանյանը հյուրընկալվել էր Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում: Վերջինս այնտեղ էր նույն համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ և փիլիսոփայության բնագավառում դոկտորական ծրագրերի տնօրեն, պրոֆեսոր, դոկտոր Բոլաժ Մեզեյի հրավերով:

Մանկավարժականի դասախոսը հոկտեմբերի 20-ին Բուդապեշտի Կորվինուս (Corvinus) համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների համար ներկայացրել է «Մշակույթի ըմբռնումը, էթնոցենտրիզմ, մշակութային բազմազանություն և բազմամշակութայնություն», իսկ հաջորդ օրը՝ Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ասպիրանտների (դոկտորանտներ) համար՝ «Գաբրիել Վահանյանը և Աստծո մահվան ուսմունքը» թեմաներով դասախոսությունները:

Այցի ընթացքում եղել են նաև մի շարք կարևոր հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են համագործակցության և համատեղ հետազոտական ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Բուդապեշտ կատարած այցի շրջանակներում Անդրանիկ Ստեփանյանը Հայ կաթոլիկ եկեղեցում հանդիպել է Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում սովորող ՀՊՄՀ-ի ուսանողների հետ, ինչպես նաև Բուդապեշտի պետական համալսարանի ինչպես նաև Բուդապեշտի պետական համալսարանի դասախոս, հայագետ Բենեդեկտ Զիգմոնտին:

Քննարկումներ Բրյուսելում

Հոկտեմբերի 9-10-ը TEMPUS ESPAQ (Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների մասնակցության բարձրացումը Որակի ապահովման (ՈԱ) գործընթացներում) ծրագրի շրջանակներում Բելգիայի Բրյուսել քաղաքում կայացան կոորդինացիոն հանդիպումներ, որին մասնակցում էին նաև ՀՊՄՀ-ի ուսումնական գործընթացների գծով պրոռեկտոր Միհր Մելիք-Բախշյանը, ուսումնական բաժնի պետ Հասմիկ Առաքելյանը, միջազգային համագործակցության բաժնի պետի տեղակալ Աննա Հախումյանը, մասնագետ Ռաիսա Ավետյանը, ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը, ինչպես նաև Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող Միշա Թադևոսյանը:

Բրյուսելում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվեց որակի ապահովման գործընթացում ուսանողների ներգրավման վերաբերյալ ձեռնարկի նախագիծը, ինչպես նաև գործընկեր համալսարանների ուսանողների, աշխատակիցների այցերի արդյունքները, եզրափակիչ գիտաժողովի կազմակերպման մանրամասները:

Ուսանողները մասնակցեցին նաև խմբային քննարկումներին, որոնց ընթացքում անդրադարձ եղավ բուհերում որակի ապահովման գործընթացում ծրագրի իրականացման ընթացքում ուսանողների ներգրավման աստիճանի բարձրացմանը:

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Հոկտեմբերի 9-13-ը Իտալիայի Տրիեստե քաղաքի Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնում (The Abdus Salam International Centre for Theoritical Physics) ՏՖՄԿ (ICTP) անցկացվեց «Ֆիզիկայի բնագավառում կանանց կարիերայի առաջընթաց» խորագրով գիտաժողով: Գիտաժողովին մասնակցում էին աշխարհի 40 երկրների հայտնի համալսարանների, լաբորատորիաների, բարձրագույն տեխնիկական դպրոցների ներկայացուցիչներ:

ՀՊՄՀ-ի և ՏՖՄԿ -ի միջև գործող պայմանագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանից գիտաժողովին մասնակցելու հրավեր էին ստացել նաև ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Նարինե Բաբաջանյանը և ամբիոնի մասնագետ, ֆիզիկոս Նունե Մխիթարյանը:

Գիտաժողովի ընթացքը հագեցած էր ֆիզիկայի և այլ բնագավառներում կանանց կարիերային ու առաջընթացին վերաբերող ելույթներով, քննարկումներով, բանավեճերով: Մանկավարժական համալսարանի ներկայացուցիչները տեսապաստառների միջոցով ներկայացրին տարատեսակ նյութեր՝ Մանկավարժական համալսարանի և ամբիոնում իրենց իրականացրած աշխատանքների վերաբերյալ:

Գիտության բացահայտումները գեղեցիկի միջոցով

«Գեղեցիկը բնության մեջ, արվեստում և գիտության մեջ, մասնավորապես՝ մաթեմատիկայում», Մանկավարժական համալսարանում կայացած Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Համլետ Միքայելյանի դասը մարդու կյանքը կարգավորող հիմնական բաղադրիչներից մեկի՝ գեղեցիկի մասին էր:

Գեղեցիկը զգալու, տեսնելու, ապրելու հնարավորություն ունեցան Գ. Ադդարյանի անվան № 133 հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների աշակերտները:

Պյութագորասի հայտնի թեորեմից մինչև ամենատարբեր խնդիրների գեղեցիկ լուծումներ. աշակերտները դոկտորի օգնությամբ դպրոցական պատերից դուրս առաջին անգամ այլ ձևաչափում ունկնդրեցին և իրենց ծանոթ գիտությունը բացահայտեցին նոր, մեկ այլ կողմից:

«Ի հակադրություն կյանքի՝ մաթեմատիկան պարզ է ու հեշտ, իսկ նրա առաջադրած խնդիրների լուծումների գործընթացն այն դարձնում է գեղեցիկ: Սա գիտություն է, որը զարգացել է գեղագիտական մոտիվների շնորհիվ և դրդում է որոշակի բացահայտման, ունի արտաքին և խորքային գեղեցկություն»,-նշեց Համլետ Միքայելյանը և մի շարք օրինակների, խնդիրների միջոցով կրտսեր սերնդին պարզաբանեց արվեստի, բնության և մաթեմատիկայի միջև եղած գեղեցիկի տարբերությունները:

Պրոֆեսորը պատգամեց անվան № 133 հիմնական դպրոցի սաներին՝ կարևորել իմացությունը, գիտելիքը. այն անհրաժեշտ է և դրա համար էլ գեղեցիկ է:

«Մաթեմատիկայի գեղեցիկը նաև իմանալու, որոնելու, լուծումներ գտնելու մեջ է. պետք է իմանալ, լցնել միտքն ու հոգին՝ դրա շնորհիվ կյանքում կգտնես և չես կորցնի»,-դասն ամփոփեց բանախոսը:

№ 133 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ջուլիետա Ղազարյանը անկեղծացավ՝ տրամաբանական հարցերի շնորհիվ առավել ամրապնդվեցին դպրոցում ստացած գիտելիքները:

Նույն դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Գեղեցիկ Մարտիրոսյանի համար դասը պատմական է. ուղիղ 30 տարի առաջ մանկավարժական բուհում իրեն դասավանդած պրոֆեսորն այսօր սիրո, գեղեցիկի և մաթեմատիկայի միջև զուգահեռներ է անցկացնում իր կողմից կրթվող սերնդի համար՝ նրանց տանելով այդ գիտության բացահայտումների նոր ճանապարհով:

Պատմամշակութային նոր տպավորություններով

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի անդամները՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, դասախոսներ Ա. Հարությունյանի և Ա. Եփրիկյանի գլխավորությամբ, հոկտեմբերի 22-ին այցելեցին Հայաստանի տարբեր պատմամշակութային վայրեր, ապա հնարավորություն ունեցան հեռվից դիտելու պատմական Անի քաղաքը: Օրը սկսվեց հայտնի Երերույքի տաճարի ուսումնասիրությամբ, որտեղ ուսանողները ծանոթացան տաճարի պատմությանը, կառուցվածքին, ճարտարապետական առանձնահատկություններին, ուսումնասիրեցին շրջակա հնագույն շինությունները: Այնուհետև Անիպեմզա գյուղի մոտակայքից նրանք հնարավորություն ունեցան ուսումնասիրելու Անի քաղաքը, ընդհանուր պատկերը, եկեղեցիները: Դասախոսների օգնությամբ ապագա պատմաբանները ծանոթացան քաղաքի պատմությանը, ճարտարապետական շինություններին, առանձնակի ուշադրություն հատկացրին դեռևս կանգուն եկեղեցիներին և շինություններին:

Դասախոս Ա. Հարությունյանը խոսեց Անի անվան ծագման, մայրաքաղաքի եկեղեցիների պատմության մասին, ապա նշեց, որ Անիի մայր տաճարը հիմք է հանդիսացել է եվրոպական, ռոմանական և գոթական ճարտարապետության համար:

Այցի միջոցով ուսանողները կարողացան թեկուզև հեռվից տեսնել և ուսումնասիրել հայոց հնամենի մայրաքաղաքը: Հետաքրքիր ու բովանդակալից այցից հետո նրանք կանգ առան Թալինի Կաթողիկե եկեղեցու մոտ՝ ծանոթանալու եկեղեցու պատմությանն ու կառուցվածքային առանձնահատկություններին:

Օրը բավական հագեցած էր՝ լի ազգային երգ ու պարով, հետաքրքիր ու նոր տպավորություններով ու գիտելիքներով:

Տաթև Արշակյան, Անժելա Ամբրոյան
Պատմության ֆակուլտետի ուսանողներ

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ԲՈՒՀԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆ Է

ԳՈՒՆԱՎՈՐ ԵՐԱԶՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Վառվող լամպի լույսի տակ հեշտ չէր սերտել քիմիական բանաձևերն ու պարբերական համակարգը, ապրել գունավոր այն երազով, թե մի օր կարող է կարդալ մարդկային հոգիները:

Տարիների փորձառություն ու վաստակ ունեցող ուսուցիչ է Իրինա Գրիգորյանը, ով ոչ միայն Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի (ավագ դպրոցի) քիմիայի ուսուցչուհի է, այլև տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը:

Ուսուցչի որակավորման առաջին կարգի տարակարգ ստացած, մի շարք գիտական հրապարակումների հեղինակը տարիների հեռվից է հիշում՝ ինչպես հայտնվեց այսօր արդեն այդքան հարազատ դարձած բուհում: Հիշում է՝ ինչպես էր դպրոցական դասերը սովորելու համար երկար ու անքուն գիշերներ անցկացնում վառվող լամպի լույսի տակ: Ասում է՝ հեշտ չէր, բայց այդ ժամանակ դժվարության մասին չի էլ մտածել, որովհետև գուցե կիսախավար էր ամեն ինչ, սակայն երազներն այնքա՜ն գունավոր էին: Ու երբ մարդիկ մրսում էին, ու երբ կանգնած էր հերթում՝ հացի համար, կարեկցանք զգաց, թե ի՞նչ, բայց մտածեց՝ բժիշկ է դառնալու, որ մարդկային կյանքեր փրկի: Բժշկուհի դառնալու անհագ ցանկությամբ էլ սկսեց պատրաստվել բուհական ընդունելության քննություններին: Ինքն էլ ժամանակին չհասկացավ՝ ինչպես հանկարծ ծնվեց մեկ ուրիշ երազանք. մանկավարժ դառնալու երազանքը: Ասում է՝ այն ժամանակ կարծես չգիտակցված ընտրություն էր, հետո է հասկանում՝ նպատակը սերունդներին միայն քիմիա սովորեցնելը չէր, այլ մարդու հոգու հետ աշխատելը, մտնելը դեռ նոր ձևավորվող ներաշխարհ ու դեռափթիթ հոգիներին ճիշտ ուղու վրա դնելը: Խոստովանում է՝ բժշկությունից շատ հեռու չի գնացել, պարզապես մտածել է՝ ֆիզիկական ցավն ուրիշ է, այն բուժելն էլ է գուցե ուրիշ, այլ է երեխայի հոգու հետ գործ ունենալը:

Որոշեց, սովորեց, ընդունվեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության և քիմիայի ֆակուլտետի քիմիայի բաժին...

Երբ ավարտեց այն, իր դասախոսների երաշխավորությամբ մանկավարժական առաջին քայլերն էլ սկսեց հենց բուհի հենակետային վարժարանում: Հիշում է առաջին անգամ դասարան մտնելը դեռ ուսանելու տարիներին, տագնապը, որ գուցե չստացվի, կասկածը՝ մասնագիտության ճիշտ ընտրության հարցում: Հիմա է գնահատում, որ այդ ամենը պատասխանատվության խորը զգացումից էր, այն գիտակցումից, որ հեշտ չէ մանկավարժ լինելը:

Միայն տարիների համառ աշխատանքը, անձնվիրումը բուհին ու վարժարանին և գլխավորը՝ աշակերտներին, հիմնասյուն եղան մասնագիտական վերելքերի համար: Քրտնաջան աշխատանքը հասել է նպատակակետին, որի առհավատչյան աշակերտների մեծագույն հարգանքն է նրա նկատմամբ:

Նա իր աշակերտների, ինչու չէ նաև գործընկերների համար օրինակ է ոչ միայն ամբարած գիտելիքների պաշարով, այլ նաև մեղմ բնավորությամբ ու բնածին խոհեմությամբ:

Վանուհի ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ԵՍ ԱՊԱԳԱ ԼՈԳՈՊԵԴ ԵՄ

Լինել ՀՊՄՀ-ի ամենամարդասիրական ֆակուլտետի արժանի ուսանող հեշտ չէ, բայց քրտնաջան աշխատանքի արդյունքում, կարծում եմ, հնարավոր է: Չէ, ամենևին էլ նկատի չունեմ, թե ես հասել եմ դրան:

Սովորելով Հատուկ կրթության ֆակուլտետի «Լոգոպեդիա» մասնագիտության արդեն մագիստրատուրայի 2-րդ կուրսում, միշտ փորձել եմ հնարավորություններիս սահմաններում հասարակական, մարդասիրական գործունեություն ծավալել՝ հաճախ փորձելով զուգակցել մարդասիրությունն առօրյա ուսանողական կյանքի հետ: Դրա վառ օրինակներից է «30 առողջ օր» ծրագրի մշակումն ու իրականացումը ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետում, նույն ֆակուլտետի ուսանողներով «Արի խաղանք» ներառական կրթության ընկալմանը նպաստող ծրագրի մշակումը և իրականացումը: Այս ամենն իրականացնելու համար, իհարկե, միայն ցանկությունը բավարար չի եղել: Շատ մեծ է եղել ՀՊՄՀ ռեկտորի աջակցությունը, ով ամեն անգամ համալսարանում նոր ծրագիր իրականացնելու առաջարկին պատրաստակամորեն աջակցել է: Անփոխարինելի է նաև ֆակուլտետի ղեկավարության աջակցությունը նմանօրինակ միջոցառումների կազմակերպման հարցում:

Ընդառաջ գնալով դեկտեմբերի 1-ին՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան, առանձնացնեմ անցյալ տարվա մեր փորձը, երբ ՀԿԽԸ-ի կողմից կազմակերպված ծրագրի շրջանակներում Հայաստանի համալսարաններ այցելեցին ՀՀ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի բժիշկները և իրականացրին անանուն հետազոտություններ՝ պարզելու համար ուսանողների ՄԻԱՎ կարգավիճակը: Հպարտությամբ ուզում եմ նշել, որ մեր համալսարանում, կամավորներիս կողմից կազմակերպված փոքրիկ իրազեկող սեմինարների արդյունքում գրանցվեց հետազոտության դիմողների ամենաբարձր ցուցանիշը: Սա խոսում է, մեր համալսարանի ուսանողների՝ թեմային իրազեկ լինելու, սեփական առողջության մասին հոգալու գիտակցության և խնդրի կանխարգելման համար քայլ անելու պատրաստակամության մասին:

Մանկավարժական համալսարանի ուսանող լինելն ունի մի շարք առավելություններ. դրանցից մեկը միջազգային փորձի փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորությունն է: Եվ լինելով մարդասիրական մասնագիտության ապագա կրող, Մանկավարժական համալսարանի կազմակերպած «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում հնարավորություն ստացա այցելել Հունգարիա: Մտքովս անգամ չէր անցնում, որ այնտեղ մարդասիրական աշխատանք կատարելու առիթ կլինի. հուզմունքով եմ հիշում այն դեպքը, երբ ինձ հաջողվեց ինքնավնասումից հետ պահել հարբած քաղաքացուն, որը կամրջի արգելապատնեշից այն կողմ էր անցել և ցանկանում էր ցած նետվել:

Ամփոփելով ամենը՝ ուզում եմ նշել, որ վստահ եմ մասնագիտության և համալսարանի ճիշտ ընտրության հարցում, քանի որ այն ինձ հնարավորություն է տալիս աշխատել՝ իմ գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնելով մեր հասարակությանն ու պետությանը:

Հերմինե ԿԱՖՅԱՆ
Հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողուհի

«Մասնագիտությունը ձեզ ուղեկցելու է ողջ կյանքի ընթացքում»,-

ասում է դեկան է. Հովհաննիսյանը

ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետում հետաքրքիր ավանդույթ է ձևավորվել. Երևան քաղաքի և մարզերի հանրակրթական դպրոցների աշակերտների համար համալսարանում կազմակերպվում է օլիմպիադա պատմություն առարկայից, և հաղթողները խրախուսվում են: Նրանք, ովքեր բարձրագույն ուսում ստանալու համար դիմում են վերոհիշյալ ֆակուլտետ՝ օլիմպիադայում լավագույն տեղեր զբաղեցնելու դեպքում օգտվում են ուսման վարձավճարի զեղչերից: Ֆակուլտետի ղեկավարների նախաձեռնությամբ աշակերտները նաև ծանոթանում են բուհի պատմությանն ու մասնագիտություններին, ինչը նապաստում է նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

Օլիմպիադայի հերթական փուլի բացմանը դպրոցականներին ողջունեց ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը, ով խոսեց Մանկավարժական համալսարանի կրթական ծրագրերի առավելությունների, չավելացվող վարձավճարների, լսարանների տեխնիկական հագեցվածության և օլիմպիադայի անցկացման նպատակների մասին:

«Վստահ եղեք, որ օլիմպիադան անկողմնակալության մթնոլորտում է անցկացվում,- հավաստիացրեց դեկանը՝ հավելելով, որ ներկա են նաև նախորդ տարվա օլիմպիադայի հաղթողները, ովքեր պարգևատրվել են մեկ տարվա վարձավճարի զեղչով:-Մասնագիտությունը ձեզ ուղեկցելու է ամբողջ կյանքի ընթացքում, ընտրեք ճիշտ մասնագիտություն, աշխատեք չսխալվել: Արագ փոփոխվող աշխարհում երեխաներն էլ հնարավորություն ունեն գումար վաստակելու. այս տեսանկյունից պատմության օլիմպիադան արդարացված է»:

Օլիմպիադան ընթացավ գիտելիքների դրսևորման ազնիվ մրցապայքարում: Դպրոցականներից շատերի համար, կարելի է ասել, սա առաջին փորձությունն էր մասնագիտության ընտրության ճանապարհին. և՛ նրանց համար, ովքեր արդեն կողմնորոշվել են, և՛ նրանց, ովքեր դեռ մտածում են ինչ մասնագիտություն ընտրել…Արդյունքներն էլ ամփոփվեցին: Առաջիկայում պարզ կդառնա, թե ովքեր են լավագույնները և ովքեր են համալրելու մեր բուհի ապագա պատմաբանների շարքերը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՌԱԴԻՈ ՖԱՄԱՆ 4 ՏԱՐԵԿԱՆ Է

➢1 ռանձնանում է մյուս առցանց և եթերային ռադիոկայաններից: Ֆաման հեռարձակվում է բուհական տարածքում՝ Մանկավարժական համալսարանի բոլոր մասնաշենքերում, ինչպես նաև՝ առցանց: Դատելով ունկնդիրների և ուսանողների ոգևորվածությունից, կարող եմ ասել, որ համալսարանական ռադիոն կայացել է: Վստահ եմ, որ այն կարողացել է այս 4 տարիների ընթացքում գրավել մեր ունկնդրին և դառնալ նրա հավատարիմ բարեկամը:

- Ո՞րն է ֆամայի հիմնական նպատակը:

- Ֆամայի նպատակը եղել է ՀՊՄՀ-ի ուսանողներին, հատկապես Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի ուսանողներին գործնական հարթակ տրամադրելը: Մանկավարժական համալսարանի ուսանողներն այլևս կարիք չունեն որևէ այլ ռադիոկայանում պրակտիկա անցնելու: Բուհի ղեկավարության օժանդակությամբ ու պատրաստակամությամբ՝ մենք կառուցեցինք տեխնիկապես հագեցված պրոֆեսիոնալ ստուդիա՝ իր բոլոր սարքավորումներով, որտեղ համալսարանի բոլոր ուսանողները կարող են իրենց ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառել: Հեռուստառադիոլրագրության բաժնի ուսանողների՝ ապագա լրագրողների համար այն գործնական պատրաստվածության բաց հարթակ է: Բացի այդ, ռադիո Ֆաման ևս մեկ կարևոր՝ տեղեկատվական գործառույթ է իրականացնում:

- Ի՞նչ բովանդակությամբ հաղորդումներ են հեռարձակվում:

- Բազմաբնույթ հաղորդումներ ունենք: Նշեմ, որ ռադիո Ֆամայի առաջին հաղորդումները եղել են լրատվական և այսօր էլ դրանք շարունակվում են՝ օրական 4 անգամ՝ 12.30, 15.00, 18.00, 21.00 ժամերին: Այնուհետև ժամանակի ընթացքում հաղորդումներն ավելացան, այսօր ունենք բազմաբնույթ ու բազմաբովանդակ հաղորդումներ՝ մշակութային, կրթական, սպորտային, երաժշտական, ժամանցային և այլն: Տասը հաղորդում է այսօր եթեր հեռարձակվում, որը պատրաստվում է միայն ուսանողների կողմից: Փորձել ենք հնարավորինս ամեն բան անել, որպեսզի եթերում լինեն ունկնդրին հետաքրքրող բոլոր ոլորտները:

- Ի՞նչ լսելիություն ունի ռադիոկայանը:

- Ֆաման լսելի է ՀՊՄՀ-ի բոլոր մասնաշենքերում, մեր ուսանողները հնարավորություն ունեն ցանկացած ժամի մեզ ունկնդրել, քանզի 24 ժամ եթերում ենք: Նաև հնարավորություն ունեն առցանց հետևել հաղորդումներին, իսկ բաց թողնելու դեպքում՝ կարող են www.radiofama.am կայքում գտնել իրենց նախընտրած հաղորդաշարը: Այս դարաշրջանում համացանցի հնարավորությունը շատ կարևոր է, քանզի մեր լսելիությունն առավել շատ է առցանց հեռարձակման շնորհիվ: Եթե անդրադառնանք մեր իրականացրած մոնիթորինգին, ապա պետք է ասեմ, որ մեզ լսում են աշխարհի 140 երկրից, իսկ ամսվա լսումների ընդհանուր քանակը 11250 է:

- Ռադիո Ֆաման ունի՞ կարգախոս, որին հետևում է:

- Այո՛, մեր անունը հենց հուշում է դրա մասին. մենք ամեն ինչ տեսնում ենք և ամեն ինչ լսում ուր էլ, որ լինենք: Եվ, բնականաբար, այդ ամենը փոխանցում ենք մեր ունկնդրին:

- Ուսանողները հետաքրքրվո՞ւմ են, ոգևորվա՞ծ են ռադիոյով:

- Սկզբնական շրջանում այդքան էլ տեղեկացված չէին, սակայն այսօր բավականին տեղեկացված են ռադիոյից, հետևում են, ցանկություն են հայտնում աշխատել մեզ հետ, հեղինակային հաղորդումներ պատրաստել և այլն: Չպետք է մոռանանք, որ մեր հիմնական հաղորդումների հեղինակները հենց նրանք են, ի դեպ ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի աշակերտները ևս համագործակցում են մեզ հետ և ունեն իրենց սեփական հաղորդաշարը:

- Ի՞նչ նոր նախագծեր են սպասվում ապագայում:

- Անընդհատ փորձում ենք արդեն իրենց հստակ տեղը գրաված հաղորդաշարերում նոր մոտիվներ մտցնել և թարմ շունչ հաղորդել եթերացանցին: Ռադիո Ֆաման զարգացող օրգանիզմ է և ամեն անգամ նոր, հետաքրքիր մտքերով ու ծրագրերով է հանդես գալիս՝ շարժվելով ժամանակի պահանջներին համապատասխան: Շատ կցանկանայի, որ հնարավորության դեպքում այն դառնար FM ռադիոկայան, որպեսզի մեր իրականացրած աշխատանքն ավելի ակնառու լիներ և հասանելի լիներ հասարակությանը:

- Ո՞րն է ռադիո Ֆամայի հաջողության գրավականը:

- Մեր աշխատանքը հաջողվում է մեր փոքր, բայց փորձառու թիմի շնորհիվ: Ռադիոյի կայացման գործում մեծ ներդում ունեն նաև մեր առաջին հաղորդումների հեղինակները, որոնք այսօր արդեն մեզ հետ չեն: Մեր հաջողությունը նվիրյալ թիմի աշխատանքի շնորհիվ է: Օգտվելով առիթից՝ կուզենայի շնորհակալություն հայտնել Ֆամայի ներկայիս անձնակազմին, նաև մեր առաջին հաղորդումների հեղինակներին:

- Ի՞նչ կմաղթեք Ֆամային իր ծննդյան օրվա առթիվ:

- Ֆամային կմաղթեմ անխափան եթեր, հետաքրքիր, գունեղ, նոր հաղորդաշարեր և բազում հաջողություններ: Իսկ Ֆամային հավատարիմ ունկնդիրներին կմաղթեմ, որ միշտ մեզ հետ լինեն, վստահեն մեզ, քանզի մենք աշխատում ենք հենց իրենց համար:

Զրույցը՝ Սոնա ԱՐԱՄՅԱՆԻ

Թափառող մայրաքաղաքների երկիր

Մանկավարժական համալսարանում կայացավ ՀՊՄՀ Հենակետային վարժարանի (ավագ դպրոց) պատմագետների ակումբի առաջին գիտաժողովը «Հայաստանի մայրաքաղաքները» խորագրով: Գիտաժողովին մասնակցում էին վարժարանի 10-12-րդ դասարանների 55 աշակերտներ, որոնք ներկայացրին ՀՀ 12 մայրաքաղաքների ստեղծման պատմությունն ու հետաքրքիր փաստեր:

Պատմաբանների ակումբը ստեղծվել է համալսարան-վարժարան համագործակցության արդյունքում: Ակումբը նպատակ ունի աշակերտների մեջ սեր արթանցնել դեպի հայոց պատմությունն ու նրանց ծանոթացնել Հայաստանի պատմական կարևորագույն իրադարձություններին և պատմամշակութային օջախներին:

Ակումբի հիմնադրումը նախաձեռնել են Մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դոցենտներ, պատմական գիտությունների թեկնածու Արմինե Եփրիկյանն ու Սամվել Պողոսյանը: Մինչ գիտաժողովը պատանի պատմաբանները հանդես են եկել տարբեր նախաձեռնություններով. կազմակերպել են արշավներ դեպի Հայաստանի պատմամշակութային օջախներ և դասախոսություններ:

Ա. Եփրիկյանը նկատեց, որ ապագայում դեռևս ակումբը շատ անելիքներ ունի, սա գիտական ոլորտում առաջին քայլն է: Ս. Պողոսյանն էլ ողջունեց աշակերտների մասնակցությունը և հավելեց, որ գիտական ոլորտում գործունեություն ծավալելու առաջին քայլը նման ձեռնարկներն են: «Ուրախ եմ, որ անդրադարձել եք հենց այս թեմային. Հայաստանը համարվում է թափառող մայրաքաղաքների երկիր, իսկ դրա պատճառը մեր դարավոր պատմությունն է»,- ասաց Ս. Պողոսյանը:

Լրագրության հոսքի 11-րդ դասարանի աշակերտուհի Միլենա Բարսեղյանին պատանի պատմաբանների ակումբ է բերել մեծ սերն ու հետաքրքրվածությունը հայոց պատմություն նկատմամբ: Գիտաժողովին Միլենա ներկայացրեց Շիրակավան քաղաքի պատմությունն ու նրա մասին հուշագրավ փաստեր: «Աշխատանքային ընթացքը հետաքրքիր է և հաճելի, ուսումնասիրել և օգտվել եմ մի քանի աղբյուրներից, հավաքել եմ մի շարք տեղեկություններ մայրաքաղաքի մասին»,- ասաց Միլենան:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Հանդիպում շրջանավարտի հետ

27 ՏԱՐԻ ԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գիտական գրադարանը հյուրընկալել էր բուհի շրջանավարտ, նկարիչ Արթուր Օշականցուն (Սարգսյան):

«95 տարիների ընթացքում Մանկավարժական համալսարանն ունեցել է հարյուր հազարից ավելի շրջանավարտներ, որոնց զգալի մասն իր ուրույն դերակատարությունն է ունեցել մեր երկրի կրթության, գիտության, մշակույթի և այլ ոլորտների զարգացման գործում: Դա շրջանավարտների այն պաշարն է, որով բուհը հպարտացել և առ այսօր հպարտանում է. այդպիսին է նաև Արթուր Օշականցին»,-նշեց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցն ու շնորհակալություն հայտնեց նրան՝ Միացյալ Նահանգներում հայկական արվեստը բարձր մակարդակով ներկայացնելու համար:

«Արթուր Օշականցին ինձ համար Հայաստանն է՝ հայ ժողովրդի արժանի զավակներից: Նա արթնանում ու ապրում է իր երկրով ու բազում թելերով կապված է հայկական մանրանկարչության և հայրենիքի հետ»,-նշեց արվեստաբան Մարտին Միքայելյանը:

«Ոսկեզօծ աշնանը կազմակերպվեց եղանակին համապատասխան գույներով ստեղծագործող նկարչի հետ հանդիպումը»,-նշեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանն ու հավելեց, որ 20 տարի զբաղվել է սփյուռքահայ արվեստի ուսումնասիրմամբ ու միշտ ինքն իրեն հարցրել՝ եթե արվեստագետը սովորում, մայրական գուրգուրանքն ստանում է հայրենիքում, իսկ ստեղծագործում արտասահմանում, նրան հա՞յ արվեստագետ է պետք համարել. «Հիմա արդեն ունեմ դրա պատասխանը. եթե արվեստագետն անկեղծ է և իր կտավներում երևում է ազգային նկարագիրը, ուրեմն նա հայ է»:

Նկարչի արվեստի մասին խոսեց նաև բանասիրական գիտությունների դոկտոր Հենրիկ Բախչինյանը՝ նկատելով. «Նա խիստ ազգային արվեստագետ է, ում մեջ արվեստն ու մարդկային արժանիքները համատեղված են»:

«Արթուր Օշականցին ստեղծագործում է առանց գոռալու, աղաղակելու, նա արվեստագետ է, ով մեր անունից աշխարհի հետ երկխոսության մեջ է»,-նշեց ճարտարապետ Լևոն Իգիթյանը և հույս հայտնեց, որ նկարիչն առաջիկայում ցուցադրություն կունենա նաև հայրենիքում:

Ցերեկույթի ավարտին խոսեց նաև Արթուր Օշականցին և վստահեցրեց, որ հայրենիքից մեկնելու է բավարարված, հպարտ ու երջանիկ:

«27 տարի անց ես նորից իմ տանն եմ: Բազմաթիվ պարգևներ ու գնահատականներ ունեմ հայրենիքից դուրս, հիմա միայն հասկացա, որ ամենաբարձր գնահատականը ես այսօր ստացա»,-նշեց նկարիչն ու շնորհակալություն հայտնեց հարազատ կրթօջախում ջերմ դիմավորելու համար:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ստեղծագործեցին բնության գրկում

«Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» խորագրի ներքո ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողներն այցելել էին «Խոսրովի անտառ» պետական արգելոց և կտավին հանձնել հատուկ պահպանվող տարածքի հարուստ բնաշխարհի աշնանային գույները: Երիտասարդ նկարիչներն իրենց գործերը կներկայացնեն տարբեր ցուցահանդեսներում՝ նպաստելով էկոդաստիարակությանը և հասարակության մեջ բնապահպանական մշակույթի ձևավորմանը:

Միջոցառումը կազմակերպվել էր ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանի նկարիչների միության միջև ստորագրված փոխըմբռնման և համագործակցության հուշագրով նախատեսված գործողությունների շրջանակում

ԲՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողները հոկտեմբերի 24-ին ուխ բնապահպանական ակումբի նախաձեռնությամբ այցելեցին Հայաստանի բնության պետական թանգարան: Թանգարանը, որն արտացոլում է Հայաստանի ինքնատիպ բնական համալիրը, բնության բազմազանությունը, վերաբացվել է 2004 թվականին: Այն եզակի է տարածաշրջանում իր հավաքածուներով ու թանգարանային արժեքներով: Թանգարանի հիմնական ֆոնդում ընդգրկված են Հայաստանի կենդանական ու բուսական աշխարհի կենսաբազմազանության յուրահատուկ նմուշներ, որոնք անցյալ երկրաբանական դարաշրջաններից պահպանվել են գրեթե անփոփոխ, անհետացած են կամ հազվագյուտ և ընդգրկված են Հայաստանի ու Բնության պահպանության միջազգային միության Կարմիր գրքերում:

Թանգարանի հետապնդած նպատակը բնակչությանը էկոլոգիական դաստիարակությանը և կրթությանը, ինչպես նաև բնապահպանական քարոզչությանը մասնակից դարձնելն է: Իսկ որպեսզի այս ամենն իրական դառնա՝ մենք՝ երիտասարդներս, պետք է հաճախակի կազմակերպենք այդպիսի այցելություններ՝ ծանոթանալու մեր փոքր երկրի գեղեցիկ բնության և մեծ ու հարուստ կենդանաբանական աշխարհի հետ:

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«Հայ քաղաքական և իրավափիլիսոփայական մտքի զարգացման յուրաքանչյուր պատմաշրջան առանձնահատուկ է առաջադրված գաղափարներով, հայեցակարգերով, դարաշրջանի քաղաքական կեցությունն իմաստավորելու եղանակներով: Հայ մտածողները բոլոր ժամանակներում հանդես են եկել ազգային պետականությունը ամրապնդելու կամ վերաստեղծելու գաղափարախոսությամբ, առաջադրել փիլիսոփայաքաղաքական տեսություններ, մեթոդաբանական սկզբունքներ ու քաղաքական կողմնորոշումներ, որոնք էականորեն նպաստել են ազգային մտածողության զարգացմանը, հայոց ինքնակառավարման համակարգի կայացմանը, օրենսդրական և իրավաստեղծման գործընթացներին:

Գիտական և ուսանողական հասարակությանը ներկայացվող ուսումնամեթոդական այս ձեռնարկն առաջին ամբողջական շարադրանքն է՝ նվիրված 18-19-րդ դդ. սահմանադրական մշակույթի և փիլիսոփայաքաղաքական մտքի համալիր լուսաբանմանը: Այն կնպաստի ուսանողության իրավաճանաչմանը, ազգային գիտակցության բարձրացմանը, փիլիսոփայական աշխարհայացքի ընդլայնմանն ու իրավական մտածողության զարգացմանը: Ձեռնարկը կարող է օգտակար լինել Հայաստանի պետության և իրավունքի պատմության, հայ իրավաքաղաքական ուսմունքների պատմության հիմնախնդիրներով հետաքրքրվողների համար:

Ուսումնամեթոդական ձեռնարկում առաջին անգամ համալիր վերլուծվել են 18-19-րդ դդ. սահմանադրական մշակույթի երկու կարևոր աղբյուրները՝ «Որոգայթ փառաց» և «Ազգային Սահմանադրութիւն Հայոց»: Մեթոդաբանական նոր սկզբունքներով իմաստավորվում են Շահամիր Շահամիրյանի և արևմտահայ մտածողների փիլիսոփայաքաղաքական ու սահմանադրահրավական հայեցակարգերը, խորհրդարանական ձևաչափով ազգային իրավական պետության նրանց առաջադրած մոդելները:

Ուսումնամեթոդական ձեռնարկը հասցեագրված է բուհերի քաղաքագիտության, փիլիսոփայության, իրավագիտության ֆակուլտետների ուսանողներին, մագիստրոսներին, ասպիրանտներին ու դասախոսներին, ինչպես նաև Հայաստանի պետության և իրավունքի պատմության, հայ քաղաքական փիլիսոփայության, հայ իրավաքաղաքական ուսմունքների պատմության հիմնախնդիրներով հետաքրքրվողներին:



Ռուս դասական գրականության գաղափարական հասունությունը և գեղարվեստական երփներանգ առանձնահատկությունները միշտ գրավել են հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչների ուշադրությունը: Այդ ամբողջական ձեռքբերումների համապատկերի վրա ստեղծվել են գրականագիտական լուրջ ուսումնասիրություններ և ժամանակին գնահատվել ըստ էության: Նման աշխատությունները կարելի է համարել հարուստ մի գանձարան, որտեղ մեծ ներդրումներ են կատարել տասնյակ անվանի գրականագետներ: Հայ-ռուսական գրական կապերին նվիրված աշխատությունների և հոդվածների թիվը հասնում է ավելի քան հազարի:

Աշխատության մեջ լուսաբանվել են ռուսական ռոմանտիկական ու ռեալիստական դասական պոեզիայի զարգացման ընթացքը և նրա գնահատումը XIX դարի հայ քննադատական մտքի կողմից: Ընդգծվում է ռուսական պոեզիայի բարերար ազդեցությունը հայ քնարերգության զարգացման վրա, ինչպես նաև գրական կապերի նշանակությունը երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը ամրապնդելու և շարունակելու ուղղությամբ:

ՆՈՐ ԽՈՐԱԳԻՐ

Սիրելի՛ ընթերցող, համալսարանի 95-ամյակի առթիվ բացված նոր խորագրի ներքո, որը վերնագրել ենք «Մի լուսանկարի պատմություն», կարող է լինել ձեր հիշողությունը, որ սիրով ու խնամքով փայփայում եք հոգու խորքում: Ուղարկեք մեզ համալսարանի պատմությանն առնչվող լուսանկար՝ իր խորհրդավոր ու ասելիք ունեցող գրառումով....Սիրով կսպասենք:

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լուսանկարները պատմություն են, որ տարիներ հետո տարբեր հուշեր ու զգացողություններ են արթնացնում... Սա Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 2-րդ կուրսն է 2012 թվականին...

Այդ օրը գեղեցիկ էր ու հիշարժան. տնտեսագիտություն առարկայի դասախոս Գրիգոր Ալեքսանի Ղարիբյանի վերջին դասն էր մեզ հետ...

«Ես 80 տարեկան եմ, խոստացեք 85-ամյակիս էլ նույն կազմով նկարվենք»,-ասաց դասախոսը՝ ընդառաջ գնալով մեր կուրսի ուսանողուհիներից մեկի՝ Շաղիկի՝ մեզ հետ լուսանկարվելու խնդրանքին:

Այնուհետև դասախոսի հետ անկեղծ զրույց ծավալվեց, և մենք իմացանք, որ նա արմատներով Սիսիանից է: Ընդհանուր ծանոթներ էլ գտանք՝ Սիսիանի «Որոտան» թերթի գլխավոր խմբագիր Արևհատ Ամիրյանին...

Թերևս կհամաձայնվեք տողերիս հեղինակի հետ. դասախոսին պետք է ճանաչել ու գնահատել, որովհետև նա միայն գիտելիքներ տվող չէ, այլ բարեկամ ու խորհրդատու, ում տարիների հեռվից հենց այդպիսին էլ պիտի հիշենք:

Իսկ հիշողությունները մարդու ապրած կյանքի տարիներն են, որոնք մի-մի ջերմ թրթիռներ են դառնում օրերի անդառնալի շղթայի մեջ՝ ժամանակը հետ վերադարձնելու մի անսովոր, անիմանալի, անզուսպ ցանկությամբ ու ակնկալիքով...

Սուսաննա ՄԻՆԱՍՅԱՆ
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ
Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 2.11. 2017 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am